

## ԱՐՏԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

1989 թվականի հունիսի 29-ից մինչև օգոստոսի 2-ը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում էր գտնվում Թեհրանի Հայոց թեմի առաջնորդ Արտակ արքեպս. Մանուկյանը: Սրբազան հորը ուղեկցում էին թեմական խորհրդի ատենապետ, Թեհրանի համալսարանի դասախոս, ճարտարապետ պրն. Արամայիս Ներսիսյանն ու «Ալիք» օրաթերթի արտոնատեր, ճարտարապետ պրն. Ալբերտ Ամեմյանը:

Գերաշնորհ սրբազանն ու մեծարգո հյուրերը Մայր Աթոռ էին ժամանել Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին բերելու պարսկահայության որդիական սիրո ողջույնն ու հավատարմությունը Ս. Էջմիածնին:

Առաջնորդ սրբազանն ու նրա ուղեկիցները ունեին նաև հայրենասիրական պարտականություն. կազմակերպել իրանահայ թեմի գործնական օգնությունը երկրաշարժի հետևանքները վերացնելու համար: Տեղի ունեցան բազմաթիվ արդյունավետ հանդիպումներ նաև պետական մարմինների հետ՝ ճշգրտելու օգնության ձևերն ու միջոցները: Հյուրերը եղան աղետի շրջաններում, ականատեսի աչքերով չափեցին աղետի խորությունը և ավելի վճռականությամբ փարվեցին վերականգնման աշխատանքներին:

Արտակ սրբազանը նաև պատարագ մատուցեց և քարոզեց Ս. Էջմիածնի Մայր Տաճարում ու Երևանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում:

Ընթերցողներին ենք ներկայացնում Արտակ արքեպս. Մանուկյանի քարոզը Ս. Սարգիս եկեղեցում հուլիսի 9-ին:

### ՄԻ ԵՐԿՆՉԻՐ ՀՕՏ ՓՈՔՐԻԿ

(Վարդավառի երկրորդ կիրակի)
(9 հուլիսի)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

«ՄԻ ԵՐԿՆՉԻՐ ՀՕՏ ՓՈՔՐԻԿ»,—Հիսուսի խոսքն է Ավետարանի միջոցով մեզ փոխանցված, ուր իր հետևորդներին հայտնում է՝ «մի վախեցիր, փոքրիկ հոտ»: Կանխատեսություն էր անում Հիսուս իր հետևորդներին, որոնք պիտի հավաքվեին և նեղություն պիտի կրեին իր անվան համար, քանի որ հարությունից, և համբարձումից հետո այդ փոքրիկ հոտը, առաքյալներից և հավատացյալներից բաղկացած՝ անվեհեր կերպով պիտի վկայեին Հիսուսի մասին, պիտի վկայեին նոր կրոնի մասին, պիտի վկայեին նոր պատգամի մասին:

Քրիստոսի լույսը տարածվեց նաև Հայաստան աշխարհում Թադեոս և Բարթողիմեոս առաքյալների միջոցով. 301 թվականին Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի ջանքերով քրիստոնեությունը դարձավ պետական կրոն: 303 թվականին Միածնաէջ այս տաճարը հիմնվեց Լուսավորչի տեսիլքի վրա և աստիճանաբար կազմավորվեց Հայոց Եկեղեցին: Հայ ժողովուրդը դարձավ Քրիստոսին հետևող փոքրիկ հոտ: Աստիճանաբար Ավետարանի պատգամը միաձուլվեց հայ ժողովրդի նկարագրին ու խառնվածքին, քրիստոնեությունը հայկականացավ և ազգայնացավ Հայաստանի հողին վրա, և Հայոց Եկեղեցին լծվեց կրոնական, կրթական, մշակութային բազմաբեղուն ծառայության: Հայոց Եկեղեցին Նարեկացիով դարձավ աղոթքի մըրմունջ, քարեղեն աղոթք՝ ճարտարապետությամբ: Իսկ Կիլիկիայի թագավորության անկումից հետո Հայ Եկեղեցու վրա ծանրացավ նաև հայ ժողովրդի ինքնությունը պահելու և ազգային մաքառումի գործը:

Այսօր նույնպես սփյուռքահայ կյանքում Եկեղեցին հանդիսանում է մեր ժողովրդի հավատքի, ինքնության, լեզվի, մշակույթի պահպանման կարևոր ազդակը:

Դարերի ընթացքին հայ ժողովուրդը զանազան տեսակի նեղությունների ենթարկվեց: Սակայն ինչ որ ստեղծվեց որպես հավատքի կենտրոն և որպես մշակույթ, հայ ժողովուրդը, շնորհիվ իր կամքին, իր տոկունության, իր հավատքին և իր հույսին, կարողացավ ոչ միայն պահել, այլ նաև ստեղծագործել, նորը հնարել, պահելով ոչ միայն ժողովրդի ինքնությունը, այլ նաև մտավոր և հոգեկան ստեղծագործությունը: Շնորհիվ այն հավատքին, որ ժառանգել էր պապերից և հատկապես այն կամքին ու փորձառության, որ ստացել էր իր պատմությունից, Հայաստան աշխարհում իր ինքնությունը վերագտավ և արտասահմանում հայ ժողովուրդը կազմակերպվեց, հավաքվելով իր եկեղեցու շուրջ: Այսօր Հայաստան աշխարհում և արտասահմանում մեր ժողովուրդը նվաճումներ է արձանագրում մշակութային, կրթական, ազգային և այլազան մարզերում:

Փոքրիկ հոտը դարերի ընթացքին տոկաց ու դիմագրավեց, և մտային ու իմացական ստեղծագործություններով, իր հոգեկան աշխարհով, իր մշակույթով՝ աշխարհի ժողովուրդների հետ միասին պահում է իր քայլը ժամանակի հետ: Դիրք են տալիս: Երբ նայում ենք այս օրերի մեր վիճակին, տեսնում ենք Հայաստան աշխարհը մշակութային, կրթական և տնտեսական նվաճումներով: Մյուս կողմից, այլազան երկրների մեջ ցրված, տարբեր երկրների քաղաքացի և հպատակ դարձած, սակայն իր հայկականությունը պահելու տենչին ու ձգտումին մեջ գործնական աշխատանքների լծված մի հայություն: Բոլորիս մտահոգությունն է արտասահմանի հայ ժողովրդի ինքնության պահպանումը, հայոց լեզվի պահպանումը, մշակույթի պահպանումը և սերտ համագործակցությունը Հայաստանի աշխարհի հետ:

Հայ ժողովրդի այս օրերի կյանքի ու մտայնության մեջ այս փոքրիկ հոտը նաև Արցախի հայությունն է, որ խիզախեց, և ամբողջ մեր ժողովուրդը ոտքի կանգնեց իր իրավունքները պաշտպանելու համար: Արտասահմանի հայությունը նույնպես զորավիգ հանդիսացավ: Այդ օրերի կացության մեջ էինք, երբ տեղի ունեցավ աճռելի երկրաշարժը, որ ոչ միայն Հայաստանի հայությանը ցնցեց, այլ նաև սրտաշարժ առաջ բերեց արտասահմանի հայության և ողջ մարդկության մեջ: Շվարեց մեր ժողովուրդը. ի՞նչ պետք է անել և ինչո՞ւ այս աղետը հատկապես այդ օրերին, երբ մեր ժողովուրդը իր իրավունքների ձգտման ճանապարհի վրա էր: Այնուհետև մեր ժողովրդին մեջ զգացումից ավելին տրամաբանությունը խոսեց, հայրենի երկրի ղեկավարությունը անցավ գործի, Ամենայն Հայոց Կաթողիկոսությունը՝ գլխավորությամբ Վազգեն Ա Հայրապետի լծվեց գործնական աշխատանքի: Արտասահմանի հայությունը ամեն տեղ գործնական աշխատանքների իր աջակցությունը բերեց, պետություններ ևս իրենց օժանդակությունը բերին և այս կերպով աստիճանաբար մեր ժողովուրդը զգաց, որ մենակ չէ բնության արհավիրքի և պատմության դիմաց: Այդ օրերին չէր կարող անտարբեր մնալ նաև իրանահայությունը:

Իրանահայությունը իր արմատներն ունի այս երկրի մեջ, իր նախապապերը այստեղից են գնացել, հայակեր Շահաբասն էր, որ խլեց իր արմատից: Իրանահայությունը առաջին իսկ օրվանից, որպես հարազատի, իր օժանդակությունը բերեց և մեծ զոհողություններ կատարեց: Իրանի իսլամական հանրապետությունը ևս օդանավերով մթերքներ ուղարկեց, ցույց տալու համար եղբայրական իր օժանդակությունը և արտահայտելու համար մարդասիրական իր զգացումը: Մենք վստահ ենք, որ շնորհիվ աշխարհի օժանդակության ու աջակցության, բարեսիրական հաստատությունների սիրահոժար մասնակցության ու հայ ժողովրդի բերած այսքան մեծ զոհողության, մոտ ապագային այն բոլոր վայրերը, որոնք

ալետի ենթարկվեցին՝ պիտի վերածաղկեն դարձյալ: Այնտեղ դարձյալ հայ ժողովուրդը իր կրթական, մշակութային, ընտանեկան և հասարակական կյանքը կստեղծի, դպրոցները կբացեն իրենց դռները, և երկնքի բարձունքներից Մեսրոպ Մաշտոցի ոգին պիտի հանգչի հայ մանուկների հոգիին վրա և նրանց շրթների վրա Է՛լ ավելի պիտի մանկանա հայոց լեզուն: Մեր ժողովուրդը ավելի պիտի ուժեղանա՝ նորանոր նվաճումներ կատարելու համար և իր իրավունքները պաշտպանելու համար, ու թախծոտ աչքերը դարձյալ պիտի ժպտան: Մեր պատմությունը իր փորձառությունն է, որ փոխանցում է մեզ: Փորձառություն, որի հիմքը փոխադարձ եղբայրասիրությունն ու համերաշխությունն է, միմյանց հանդեպ հարգանքն է: Եվ մենք նրա բարեբեր սերմերը տեսնում ենք արդեն արտասահմանի մեջ. հայ ժողովրդի զավակները ինչ հուսանքի էլ որ պատկանեն, պիտի բոլորվեն հայրենիքի շուրջ: Մենք փոքրիկ հոտ ենք, բայց այս փոքրիկ հոտը դարերի ընթացքին այնպիսի մշակութային նվաճումներ է արձանագրել, որ այսօր այս փոքրիկ Հայաստան աշխարհը հայ ժողովրդի անցյալի փառքն է պատմում: Մեր սրտագին բաղձանքն է, որ Քրիստոսին հետևող այս փոքրիկ հոտը, որ որպես հայ ծանոթ է ամբողջ աշխարհին՝ կարողանա իր երազանքների իրականացումը գտնել: Մեր սրտագին մաղթանքն է, որ աշխարհում խաղաղություն լինի, և մեր ժողովուրդը իր իրավունքների տերը դառնա և տարեց տարի իր կատարած աշխատանքներով, իր նվաճումներով հասնի իր նպատակին:

Աստված անսասան պահի հայ ժողովուրդը, Հայաստան աշխարհը, նվիրապետական Սուրբ Աթոռները՝ Ամենայն Հայոց Հայրապետությունը, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսությունը, Պատրիարքական Աթոռները և մեր բոլոր թեմերը, որպեսզի միացյալ ուժերով ու համագործակցությամբ հայ ժողովրդի երազանքը իրականություն դարձնենք»: